and J. Fichte. The author notes the enormous possibilities of ironic comprehension of reality, providing unlimited freedom of creativity and allowing the artist to rise above the ordinary avoiding one-sidedness. The great interest in the phenomenon of irony in our time is due to the fact that it is perceived as one of the important manifestations of «new» thinking, which builds new worlds and generates new meanings in art through artistic depiction and expression.

Keywords: irony, romanticism, Fr. Schlegel, philosophical foundations, freedom of creativity, contradiction, fragmentation, universality.

«ՍՈՒՐԲ ԳՐՈՑ» ԲԱՆԱՀԱՍՈՒԹՅԱՆՆ ՕԳՏԱԿԱՐ ՈՒ ՊԻՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՍԵՌ ՏԱՐՈՐՈՇՈՒՄԸ Ս. ՕԳՈՍՏԻՆՈՍԻ «ՍՐԲԱԶԱՆ ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՅՈՒՄ»

Ռոմիկ Քոչարյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մ.Մաշտոցի անվ. Մատենադարանի ավագ գիտաշխատող

Ս. Օգոստինոսի «Սրբազան Հերմենևտիկային» («Սրբազան Մեկնագիտությանը») փոխներթափանց միահյուս «էկզեգետիկայի» («գիտամեկնության») փոխզորակցությամբ ներկայացող տեսա-գործնականորեն ամբողջական մեկնահայեցակարգը կոչված է հավատի ու մտքի փոխներգործուն փոխզորակցությամբ բանահասու լինել (հասկանալ) ***Սուրբ Գրերում բովանդակյալ իմաստությանը:*** Նախորդ իմ աշխատություններում արդեն հնարավորություն եմ ունեցել առաջադրել «իմաստության հերմենևտիկայի» իդեան, հիմնավորումը, սահմանումն ու հայեցակարգի կիրարկումը մտածողների ու իրենց ուսմունքների, տեսությունների կոնկրետ մեկնություններում[1], և առիթ է նաև ընձեռնվել ս. Օգոստինոսի մեկնագիտական հայեցակարգը դիպուկ վերահատկորոշելու որպես

[1] Տե՛ս **Քոչարյան Ռ.**, «Իմաստության հերմենևտիկան»՝ ամենայն գիտության և փիլիսոփայության հիմնորոշ ու համընդհանուր մեթոդաբանական հայեցակարգ – Արդիականության մարտահրավերները. փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ, միջազգային գիտաժողով, ԵՊՀ հրատ., Եր., 2014, էջ 18-21. **Քոչարյան Ռ.**, Պատմությունը և Հերմենևտիկան, Գիրք 1. Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը, «Փրինթինֆո», Եր., 2016, 632 էջ 161-186. **Քոչարյան Ռ.,** Կրթություն և Հերմենևտիկա. Կրթություն՝ առ իմաստություն, Եվրոպրինտ, Եր., 2018, էջ 170, 172- 201:

«իմաստության հերմենևտիկա»[1]**:** Թեև սուրբ հայրն իր մեկնագիտական հայեցակարգը երբևէ չի անվանել որպես «իմաստության մեկնագիտություն (հերմենևտիկա)», այնուամենայնիվ, նրա մեկնագիտության բովանդակային առանձնահատկությունը՝ դիտավորություն ու կատարում ունենալով «Սուրբ Գրոց»-ում բովանդակյալ իմաստության բանահասության ու մեկնորոշման ընդհանուր տեսության հիմնահաստատման, հնարավորություն է ընձեռում նրա մեկնագիտությունը դիտարկել որպես «իմաստության հերմենևտիկայի» սկզբնավորում: Ֆրանսիացի հայտնի աստվածաբան Է. Ժիլսոնի բնորոշմամբ՝ «Օգոստինոսն ինքն իրեն խնդրադրել էր Սուրբ Գրոց նկատմամբ հավատի միջոցով հասնել նրանում բովանդակյալ իմաստության բանահասությանը»[2]: Ահավասիկ, Է. Ժիլսոնի այս բացահայտությունը լրացուցիչ հիմնավորում է Օգոստինոսի մեկնագիտությունը ևս վերաբնորոշելու համար որպես «իմաստության հերմենևտիկա»:

Իր աշխատություններում ս. Օգոստինոսը բացորոշում է այն միջոցները, որ և անհրաժեշտ ու նախընտրելի իրենց ներպահանջ-վածությամբ օգտակար ու պիտանի են Աստվածաշունչ Մատյանի իմաստության բանահասության ու մեկնորոշման համար[3]: Նա իր «Քրիստոնեական գիտությունը» մեկնագիտական աշխատությունում քննորոշում է նաև իր ժամանակաշրջանում հայտնի գիտությունների, արվեստների ու այլազան իմացակարգերի պիտանի և-կամ անպետ լինելը Սուրբ Գրոց իմաստությանն ընթերցասեր և ուսումնասեր բանահասությանը[4]:

---

[1] Տե՛ս **Քոչարյան Ռ.,** Ս. Օգոստինոսի «Սրբազան Մեկնագիտության» ուսումնասիրության առաջնային ու գերագույն առարկան (Աստվածաշնչում Հակոբի ու Մանվեի հարցին հրեշտակի պատասխանի իմաստության խորհուրդի քննա-համեմատական մեկնորոշմամբ) – *Էջմիածին,* Եր., էջ 32. **Քոչարյան Ռ.,** Սիրո չորս առարկաները Ս. Օգոստինոսի «Սրբազան մեկնագիտության» հայեցակարգում – «Հայ հասարակության զարգացման հիմնախնդիրները արդի ժամանակաշրջանում. մարտահրավերներն ու դրանց լուծումները», գիտական հոդվածների ժողովածու, Եր., «Եվրոպրինտ» հրատ., 2019, էջ 66:

[2] **Жильсон Э.,** Философия в средние века, Изд. Культурная революция, Республика, М., 2010, с. 96.

[3] Տե՛ս **Քոչարյան Ռ.,** Նշանների հատկորոշումը և անհայտ նշանների ու նշանակությունների բանահասության միջոցները Ս. Օգոստինոսի «Սրբազան հերմենևտիկայի» հայեցակարգում – «Փիլիսոփայությունը արդի աշխարհում», գիտական հոդվածների ժողովածու, Գիրք X, «Եվրոպրինտ» հրատ., Եր., 2020, էջ 50 - 68:

[4] Տե՛ս **Аврелий Августин,** Исповедь, изд. «Ренессанс», М., 1991. **Августин Блаженный**, Христіанская наука, или Основанія св. Герменевтики и церковнаго красноречія, Кіев, 1835.

Հայտնի է, որ Օգոստինոսն իր մոր հոգածությամբ քրիստոնեության վարդապետությանն ու հավատացյալ կյանքին հաղորդ էր մանկուց ի վեր և գիտական գրականությանն ուսումնառու՝ որոշաչափ հաղորդ ու ընկալ էր նաև անտիկ հունա-հռոմեական մտածողների աշխատություններին՝ որպես հենց նախընթացություն ու նաև զուգընթացություն այնուհետ Սուրբ Գրքին ու իրեն ժամանակակից ու նաև նախորդող քրիստոնյա մտածողների մեկնություններին իր ընթերցասեր և ուսումնասեր ներկրթությամբ՝ առ իմաստություն հոգևոր ներկատարելագործվող հասունացմանը[1]: Եվ Սուրբ Գրքում անհայտ նշանների ու նշանակությունների բանահասությանն ուշագրավ ու էական անհրաժեշտություն ու պիտանություն նա նկատում է նաև գիտություններում: Օգոստինոսը ***երկսեռ տարորոշում*** է ***գիտությունները***՝ երկուստեք սերտ կապված մարդկային ինքնությունը, կյանքն ու մշակույթը ճշմարտաբան ու արդարաբան հոգևոր որպիսությամբ՝ ուղղությամբ ու բովանդակությամբ կայացնող ***բարոյականությանը:*** Որպես ***առաջին սեռ***, նա հիշատակում է այն գիտությունները, որ և որպես առարկա ու բովանդակություն ունեն ***մարդկանցով ստեղծվածն ու սահմանադրվածը,*** դրանց թվում նշելով և՛ այնպիսիք, որ կենսօգուտ են մարդկային համակեցությանը, և՛ այլպիսիք, որ էապես կապված ու կապանքված և նույնիսկ հատկորոշված են սնոտիապաշտություններով: Իսկ որպես ***երկրորդ սեռ***, նա առանձնացնում է այն գիտությունները, որ ուսումնասիրում են այն, ինչը չի ստեղծված նրանց կողմից, այլ դիտարկումներով ընդունված է որպես ***աստվածատուր ու պատրաստի*** կամ ***ի վերուստ հաստատված***[2]***:***

Ս. Օգոստինոսն իր «Սրբազան Հերմենևտիկայի» հայեցակարգում սեռերի զուգաբաշխելով (երկսեռ տարորոշելով) գիտությունները՝ ***«մարդկային համակեցությանը կենսօգուտ մարդկանց ստեղծվածքների»*** և ***«աստվածատուր գիտությունների»***, իմացա-հայտում է նաև դրանց պիտանությունը Սուրբ Գրերում անհայտ նշանների ու նշանակությունների իմացությանն ու խորհրդանշանակ բովանդակության բանահասությանը (հասկացմանը): Առաջին սեռի

---

[1] Տե՛ս **A companion to Augustine**, ed. by M.Vessey with the assistance of Shelley Reid, Wiley-Blackwell, A John Wiley & Sons, Ltd., Publication, 2012, p. 161-254.

[2] Տե՛ս **Августин Блаженный**, Христіанская наука, или Основанія. св. Герменевтики и церковнаго красноречія, Кіев, 1835, էջ 111:

շարքում նա հիշատակում է նախնյաց ու նաև իր ժամանակում գործող՝ իրենցում սնոտիապաշտության ծնունդ և-կամ սնուցվող և-կամ բովանդակող տարատեսակ իմացակարգեր՝ այլևայլ միջոցներով գուշակություն ու այդ թվում՝ աստղագուշակություն, մոգական բժշկություն…, որ և իրենց աղբյուր, սնուցում ու հիմունք ունեն են մարդկանց ու անկյալ հրեշտակների պարզահայտ կամ գաղտնի հաղորդակցությունը, դիվական ներգործությունը, խաբեպատիր ներշնչումն ու սնոտի կարծամտությանը[1]: Օգոստինոսն իրենից հեռու վանելով ստահոդ գուշակություններն ու անազնիվ մտապատրանք-ները մաթեմատիկոսների[2] և իր սեփական հոգե- ու մտափոր-ձառությունը խոստովանող աշխատությամբ այլոց ևս կոչ հղելով ճշմարտության սիրո ու նվիրումի ազնվահոգի սիրո զգացմունքի, ազնվամիտ ու ազնվաբարո հոգևոր կեցողությամբ լինելության և, ընդհանրապես, մարդկային գիտությունների շարքում տարորոշելով կեղծն ու սնոտին, տարանջատում է դրանք ճշմարտության բացահայտմանը կողմնորոշված օգտակար, պիտանի ու ստույգ գիտություններից[3]: Այդկերպ նա աստղագուշակությունից հստակ տարբերակում է աստղաբաշխությունը, բույսերի կամ քարերի մոգական ներգործության վրա հիմնացյալ ախթարական կեղծ բժշկարվեստը՝ բույսերի ու քարերի բնահատկությունների ուսումնասիրությանը հիմնացյալ ճշմարիտ բժշկագիտությունից[4]: Լոկ մարդկանցով սահմանվածքների, իմացակարգերի ու գիտությունների շարքում վերոնշյալ կեղծիմացությունների հետ մեկտեղ՝ նա հիշատակում է դիվական ներգործությունից զերծ նաև այնպիսիք, որ և գործածական են մարդկանց մեջ ՝ ունենալով որպես իրենց որևոր նշանակությունը սահմանադրող ու որոշարկող ոչ ամենևին ինքնաբուխ կամ այլ ինչ, քան միմիայն մարդկային կամքն ու մտահղացքը: Եվ ըստ Օգոստինոսի, մարդկային կամքի ու մտահղացքի պտուղ հանդիսացող այդպիսի գիտություններ ու

---

[1] Տե՛ս նույն տեղը, էջ 111-124, 150-151:

[2] Տե՛ս **Аврелий Августин,** Исповедь, изд. «Ренессанс», М., 1991, էջ 172:

[3] Մարդկային կեղծիմացական գիտակարգերից հրաժարման ու ձերբազատման՝ Աստծով ազատագրումը հավաստող ս. Օգոստինոսի անձնական հոգե- ու մտափորձառության խոստովանական իմաստապատումը տե՛ս նույն տեղը, էջ 172-175:

[4] Տե՛ս **Августин Блаженный**, Христіанская наука, или Основанія. св. Герменевтики и церковнаго красноречія, Кіев, 1835, էջ 133 և 134-136:

իմացակարգեր են՝ և՛ որոնք ***ոչ-պիտանի*** են ու լոկ ծառայում են ***հաճույքի ու պերճանքի***, և՛ որոնք ***օգտակար*** ու ***անհրաժեշտ*** են[1]: Արդ Աստվածաշնչի հասկացման և-կամ գիտությունների ու արվեստների ձգտում ունեցող շնորհալի անձանց՝ Աստծո երկյուղով ու սիրով երանելի կյանքի հետամուտ, անհարկի է զբաղվել դրանց թվում ոչ այնքան պիտանիներով, որ և լոկ հաճույքի ու պերճանքի են ծառայում[2]:

Լոկ մարդկանցով ստեղծվածների ու սահմանվածների շարքում ևս ամենայն նշանները չէ, որ և ինքնահայտ ու ինքն իրենցով արդեն հասկանալի են, այլ պահանջում են որևիցե մի գիտեցող անձի մեկնորոշումը, թե այդ նշանով ինչ նշանակություն է արտահայտում: Անշուշտ, նշում է սուրբ հայրը, ամենքն են ձգտում նկատել նշանի ու իրենով նշանակյալի մոտավոր նմանությունը, որչափ և նշանները նմանազոր են իրենցով արտահայտվող իրերին, և քանզի մեկը մյուսին նմանազոր են տարբեր առումներով, նշանների հասկանալիությունն անհրաժեշտորեն կախված է իրենց նշանակությունների վերաբերյալ նախապայմանավորված համաձայնությունից[3]: Զորօրինակ կերպարվեստի ստեղծագործությունում՝ կախված հեղինակի արվեստավորության փորձառությունից, ըստ Օգոստինոսի, այն դիտելիս՝ մեծաչափ անսխալականությամբ ճանաչվում է, թե ինչի՞ն է նման և ի՞նչ է իրենով արտահայտում, թեկուզ և դրանք ևս սուրբ հայրն առավել դասում է ոչ-պիտանի իրերի սեռում, բացառությամբ իրենց հատուկ որևէ նշանակությունը, նպատակային պատճառը, տեղը, ժամանակը և բուն գոյանպատակը հստակ մտահայտող մարդկային ստեղծագործությունների[4]: Եվ «վերջապես, մարդկանց կողմից ստեղծվածներից լիովին ոչ-պիտանի են հազարավոր տարատեսակ առակներն ու մտահորինվածքները, որոնցով և հնուց ի վեր զվարճանում են մարդիկ», քանզի «զուտ մարդկային հորինվածքներում, որչափ և մարդկանցից են առաջացել՝ այնչափ առավել լեցուն են ստությամբ ու խաբեությամբ»[5]:

---

[1] Տե՛ս նույն տեղը, էջ 125:
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 150 և 151:
[3] Տե՛ս նույն տեղը, էջ 126:
[4] Տե՛ս նույն տեղը, էջ 126-127:
[5] Նույն տեղում, էջ 127:

Ըստ Օգոստինոսի, մարդկային սահմանվածքներում ու հորինվածքներում կան նաև նշաններ, որ և ***անհրաժեշտ, օգտակար ու պիտանի*** են մարդկային համակեցության համար: Արդարև, մարդկային հորինվածքներում ու սահմանվածքներում ***օգտակար ու անհրաժեշտ*** են անչափ բազմատեսակ նշաններ, առանց որոնց մարդկային հանրությունն ինքնին և իր կենսագոյությունն ու համակեցությունը կամ ամենևին ***անհնար*** է, զորօրինակ՝ սեռն ու կոչումը տարբերակող հագուստների ու հանդեՃանքների հանրահայտ ընդունված ձևերը, կամ ***անկատար*** է, զորօրինակ՝ դրամների կշիռը, չափը, դրոշմն ու գինը՝ յուրօրինակ ամենայն ժողովուրդների կյանքում: Եվ վերոնշյալ ամենայնը տարբեր ժողովուրդների կյանքում չէր լինի տարակերպ և-կամ միևնույն ժողովրդի կենցաղակարգում՝ փոփոխվող կառավարողների կամքով, եթե չլինեին սկզբունքորեն զուտ մարդկային սահմանվածքներ[1]: Սուրբ հայրն ընդգծում է, որ անհարկի է քրիստոնյային ատելությամբ կամ արհամարհանքով վերաբերվել կենսօգուտ մարդկային սահմանվածքներին, այլ բացառելով սկզբունքորեն մերժողական մոտեցումը՝ նկատել և մտապահել դրանցում ամենայն պիտանին ու անհրաժեշտը, քանզի դրանց որոշ բնութագծեր իմացահայտվել ու փոխառվել են հենց բնությունից և ուրեմն՝ հարկ է ատել ու բացառել լոկ այնպիսիք, որ և անկյալ հրեշտակների հետ հաղորդակցության ու հենց դիվական ներգործության արդյունք ու հետևանք են[2]: Մարդկային ստեղծ-վածքներում ու սահմանվածքներում տարբերակելով ճշմարիտն ու սնոտին, բնականոնն ու անբնականը, բարենշանակ ներբո-վանդակալին ու ունայնը, պիտանին ու անպիտանը, օգտակարն ու ավելորդը և այսու՝ զանցառելով անպետն ու ավելորդը, ըստ Օգոստինոսի, մարդկային հոգևոր-քաղաքակրթական կյանքում սկզբունքորեն հոգե- ու կենսանպաստ և էականորեն կրթունակ՝ ուսումնառության ենթակա են ***մարդկանց՝ փոխմիացնող ու միասնարար*** ստեղծվածքներն ու սահմանվածքները, զորօրինակ՝ տառերի գծագրերը, որ և ընձեռում են հնարավորությունն ընթերցանության, կամ հապավումների նշանները՝ հայտնի

[1] Տե՛ս նույն տեղը:
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 127-128, 150-151:

գրագիրներին ու նոտարներին[1]: «Անհարկի է անտեսել մարդկային այն գիտություններն ու սահմանվածքները, որ և առնչվում են համակեցությանը՝ ըստ ներկա կյանքի անհրաժեշտ պիտույքների»[2]: Մարդկային ստեղծվածքներում ամենայն այդպիսիք պիտանի են, քանզի չեն ներկրթում սնոտիապաշտության, այլ միմիայն ***մարդկային համակեցությանն առավելանպաստ կենսօգտության*** և, ըստ սուրբ հոր մեկնուսույց ու համակողմանի մշակված մեկնագիտական հայեցակարգի, ամենևին ավելորդ չեն, եթե չեն մտագրավում ու հոգեգրավում այնչափ, որ և միմիայն դեպի իրենց կենտրոնացնեն ու նպատակադրեն անձանց հոգևոր ուժերն ու գործունեությունը, այլ մտազբաղեցնում ու կենսազբաղեցնում են լոկ այնչափ, որ չեն խոչընդոտում հասանելու հոգևոր վերնանպատակին, ինչին և այդ ամենը հարկ է հենց կոչված լինի[3]:

Ինչպե՞ս հասկանալ վերոասացյալը Օգոստինոսի մեկնագիտական հայեցակարգի ամբողջական համատեքստում: Սուրբ հայրն իր մեկնագիտական հայեցակարգում որպես Սուրբ Գրոց հասկացման նախադրյալ, «դուռ» ու բանալի է նշում երկմիասնական հոգևոր սերը՝ աստվածասիրությունն ու մարդասիրությունը, որ և Սուրբ Գրոց խորհրդապատում բովանդակության ու խորհրդուսույց հոգևոր ուսուցանության բուն դիտավորությունը՝ իդեայի մտահայեցումն ու նպատակադրությունն է, ներանձնական հոգեկատարելագործման ու միջանձնային կենսակատարելագործման վերընթացության մեկնակետն ու կատարումը: Եվ «Աստվածաշնչյան Մեկնագիտության» կամ «Սրբազան Մեկնագիտության» ուսումնասիրության առարկայի որոշարկման համար ամենայն գոյը տարորոշելով եռադաս միությամբ՝ ***սիրո ու սքանչացման*** արժանի է դիտում գերագույն էակին՝ Աստծուն, իսկ ***սքանչանալ ու նաև օգտվել*** արժանի ու հարկի է դիտել մարդուն՝ հանուն նրանում Աստծո ու աստվածայինի և միմիայն ***օգտվելու*** պիտո է մնացյալ աշխարհը, այսինքն՝ բնաշխարհն ու կենսապիտան մշակույթը, որ և կոչված են պիտանիության ու օգտակարության՝ սիրո ու սքանչացման առարկաներին հոգևոր սիրով միությամբ հարազատության ու երջանկության հասնելու համար:

---

[1] Տե՛ս նույն տեղը, էջ 128:

[2] Նույն տեղում, էջ 151, տե՛ս նաև էջ 154:

[3] Տե՛ս նույն տեղը:

Ահավասիկ, սուրբ ու իմաստուն հայրը սիրո ու սքանչացման արժանի է դիտում Աստծուն և աստվածայինն ամենայնում, ըստ որում և՝ մարդկային անձը՝ արարյալ աստվածային պատկերով ու նմանությամբ և իր գործերը՝ աստվածայինն իրենցում կերպառյալ մշակույթը, իսկ կենսապիտան ու կենսօգուտ են բնաշխարհն ու ***կենսամշակույթում՝ զուտ մարդկային ստեղծվածքն ու սահմանվածքը՝ միջմարդկային նախապայմանավորված համաձայնությամբ՝ բնությունից կերպառյալ կամ մարդկանց միասնացնող իրենց օգտունակությամբ, քանզի և կոչված են լինել պիտանի ու օգտակար՝ սիրո ու սքանչության միայն արժանի ու արժանացնող Աստծուն առինքնող, շնորհով ու ներկրությամբ կայացող ու ներկատարելագործվող՝ անձանց հոգևոր սիրո ու սքանչացման ներընկալության ու երջանկության լրումին ու կատարելությանը:***

Ըստ Օգոստինոսի, ի տարբերություն վերոքննարկյալ զուտ մարդկային ստեղծվածքների՝ ոչ մարդկային ծագումնաբանությամբ են այն ամենը, որ և զուտ մարդկանցով չստեղծված, այլ ***ընդունված են նախկին ժամանակներից*** կամ ***ի վերուստ հենց Աստծուց***՝ ում ձեռքերով կամ շուրթերով էլ այն պահպանված ու փոխանցված լինի[1]: Իսկությունն իրենցով նշանահայտող այստեսակ նշաններ են ու իրենցում նշանային կառուցվածքով են ներկայանում երկուստեք՝ և՛ որոնք վերաբերում են ***«մարմնին ու զգայություններին»***, և՛ որոնք վերաբերում են ***«հոգուն ու բանականությանը»***[2]: Արդ՝ աշխարհի անցուդարձին, նյութեղեն ու զգայելի իրողություններին և մարմնին վերաբերող առաջին տեսակը կամ ***«պատմողություններ»***, կամ ***«նկարագրություններ»***, կամ ***«փորձեր ու մեխանիկական գործեր»*** են[3]:

Ըստ նրա մեկնագիտական և պատմագիտական հայեցակարգի, անցյալ ժամանակների փոխանցվող հաջորդականությունը պատմող ամենայնը, որ և կոչվում է ***պատմություն***, էապես ու մեծաչափ նպաստում է սուրբ գրքերի բանահասությանը, թեև Եկեղեցու հետ չառնչված իր բովանդակության պարագայում՝ այն ամենամանկական գիտությունն է: Ինչպե՞ս հասկանալ վերոասացյալը: Մեկնորոշելով այդ միտքն ու բնորոշումը, ըստ որի՝ պատմությունը՝ եկեղեցուն

[1] Տե՛ս նույն տեղը, էջ 128-129:
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 129:
[3] Տե՛ս նույն տեղը:

չառնչվող իր էությամբ դեռ մանկազույն չափահասակի է, որ և, ըստ իս, կնշանակի, որ ***այդտեսակ պատմությունը չունի գիտության բուն կոչումին հարկի ու պատշաճ հասունությունն ու պատրաստությունը՝ մարդկային կյանքի որպիսությունն ու բուն իսկությունը իր հոգևոր միջուկի ու հենց հոգևոր կյանքի որակով և բոլորաթափանց ներգործությամբ հայտորոշող տեսա-գործնական իմաստությունը բացորոշելու դիտավորության ու կատարումի խնդրակարգի լրիվությունն ու կատարելությունը***, ինչը և այդչափ իր դիտավորության ու կատարումի բովանդակության որակում կարելի է վերանվանել ***նախագիտություն:*** Հիրավի, պատմությունն իր ուսումնասիրության առարկայում եկեղեցուն ևս իրենում ներառելով հանդերձ և, սակայն, եկեղեցու հոգևոր իսկությանն ու խորհուրդին չառնչվող իր պատմելիք բովանդակությամբ, ըստ իս, նույնանում է հեթանոսական պատմության՝ ***աշխարհի անցուդարձ պատմող անհոգևոր իմաստապատումին*** և զուրկ է լինում ***իմաստության խորհրդապատում լինելու իր կոչումից ու բուն իսկությունից:*** Այդկերպ՝ այն իրոք նախագիտություն է և դեռ վերահասու ու հասունացած չէ իր բուն կոչմանն ու ըստ այդմ՝ իր իսկության լրումի կատարումին, չունի ***ամենայն եղելություններում իմաստության խորհուրդի բացահայտման ինքնահասկացումն ու կենագործումը՝ որպես արդեն խորհրդապատում,*** ինչպես և ներկայանում է Սուրբ Գիրքն իրենում պատմվող ամենայն իր պատմադրվագներում: Եվ այնուամենայնիվ, այդպիսի պատմությունը ևս նույնիսկ մանկաչափ իր հասունությամբ պիտանի ու օգտակար է Սուրբ Գրոց բանահասությանը, քանզի բազում իսկություններ և այդ թվում՝ ժամանակագրական՝ բացահայտվում են Օլիմպիադաներով և կոնսուլների անուններով, և, «ընդհակառակը, Տիրոջ ծննդյան ու չարչարման ժամանակների կոնսուլության չիմացությունը ոմանց մատնեց և թյուրիմացության, իբրև թե Տերը չարչարվեց իր կյանքի քառասունվեց տարում, քանզի և Երուսաղեմի տաճարը Տիրոջ մարմնի նախակերպարը կառուցվեց քառասունվեց տարի, ինչպես ասում էին հրեաները»[1]: Իր երկրային կյանքի երեսուն տարում մկրտությունից (Ղուկ., Գ, 23) ի վեր «որքան երկար Նա ապրեց երկրի վրա հնարավոր է Իր գործերի քննառությամբ միայն կռահելով եզրակացնել, իսկ

[1] Նույն տեղում:

առավել ստուգությամբ այն կարելի է պարզել հեթանոսական պատմությունից՝ Ավետարանների հետ քննահամեմատությամբ»[1]: Այդկերպ հնարավոր է ոչ միայն ճանաչել ոմանց թյուրամտությունը, այլև այն, որ ի զուր չէ նաև հիշատակված Երուսաղեմի տաճարի կառուցման քառասունվեց տարին, նշում է Օգոստինոսը, որ թեև անկարելի է թերամտորեն կիրառել այն նշելու համար Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի տարիների թվաքանակը և, սակայն, աներկբայորեն իր հատուկ նշանակալիությունն է հայտում մարդու մարմնի կառուցվածքի վերաբերյալ, որ և Աստծո Որդին անճառելի իր մարդասիրությամբ չխորշեց իրեն վերահանդերձել ու կատարյալ աստվածությամբ՝ լինել և կատարյալ մարդ[2]:

Եվ արդ՝ էական է հարցադրել, թե՝ «որպես ի՞նչ գոյություն ունի պատմությունը՝ որպես մարդկանց ստեղծագործություն և ուրեմն՝ մարդկանց կողմից իր գոյության մեջ որպես այդպիսի գոյ հաստատված մի բան, թե՞ ոչ մարդկային կամոք ստեղծված մի գոյ և ուրեմն՝ ոչ մարդկային հաստատություն»[3]: Ըստ Օգոստինոսի, պատմությունը պատմում է անցյալի կամ ներկայի իրերի մասին[4]: «Քանզի պատմությունն ***ի մեջ այլ ամենի*** (ընդգծումը՝ Ռ. Ք.) պատմում է նաև բոլոր անցյալ մարդկային հաստատակարգությունների ու ստեղծագործությունների մասին, ինքը՝ պատմությունն այլևս անհարկի է դասել զուտ մարդկային ստեղծագործությունների շարքում, ինչը ցույց է տալիս նաև հենց իր առարկան, քանզի ողջ անցյալը չի կարող արդեն փոփոխության ենթարկվել և պետք է մնա մշտապես ժամանակի այն կարգում, որի Արարիչն ու Կառավարողը միայն Աստված է[5]»: Եվ իր միտքն ամփոփելով՝ սուրբ հայրը հաստատագրում է, որ պատմությունը պատմում է ***անցյալի ու ներկայի իրողությունները*** ստուգությամբ՝ ի օգուտ ընթերցողների, իսկ գուշակների ու այլոց ախտարական նմանատիպ գրքերն ուսուցանելով ինչ-որ բան անել կամ դիտել՝ չեն մեկնահայտում բուն

---

[1] Նույն տեղում, էջ 130:

[2] Տե՛ս նույն տեղը:

[3] **Քոչարյան Ռ.**, Պատմությունը և Հերմենևտիկան, Գիրք 1. Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը, «Փրինթինֆո», Եր., 2016, էջ 325:

[4] Տե՛ս **Августин Блаженный**, Христіанская наука, или Основанія св. Герменевтики и церковнаго красноречія, Кіев, 1835, էջ 151:

[5] Նույն տեղում, էջ 132:

իսկություն և ճշմարտությանն անիմա ու ամենևին անհիմն իրենցում ունեն միայն ***հանդգնությունն՝ իբրև թե ուսուցիչների***, այլ ոչ ***ստուգությունը պատմողների:***

Աստվածաշնչի այլաբանող որոշ տեղիների հասկացմանն է նպաստում ոչ միայն պատմությունը՝ անցյալի ու ներկայի եղելությունների՝ պատճառով հանդերձ, իսկություն պատմող իր պատմաբովանդակությամբ ու պատմաեղանակով, այլև հենց ներկան նկարագրող՝ աշխարհագրական բնույթի կամ կենդանիների, ծառերի, բույսերի, քարերի, երկնային լուսատուների շարժման հատկությունների մասին պատմողությունները ևս[1]: Ընդ որում, աստղերի մասին ուսմունքն իր որոշ մասով նաև անցյալի պատմողություն է, քանզի աստղերի ներկա դիրքից ու շարժումից հետևողական ու ճշգրիտ մտահանգմամբ կարելի է մտովի վերականգնել նաև անցյալում դրանց դիրքը, շարժման հետքն ու հետագիծը, ինչպես նաև աստղերի առնչությամբ իրենց դատողություններում կատարել «հաշվարկման վրա հիմնված կանխատեսումներ հենց աստղերի հետագա շարժընթացի, այլ ոչ թե մարդկային գործերի ու իրադարձությունների ապագայի վերաբերյալ, ինչպես և առհասարակ բարբաջում էին աստղագուշակներն»[2]:

Ըստ Օգոստինոսի, նույնաբար նախկին փորձառությանը հիմնված դատողություններով ***ապագան ճշմարտորեն կանխատեսվում է***, այսինքն՝ ***նախկին փորձառությամբ ձեռքբերյալ հմտավարժ գիտեցմամբ՝ հենց հետագա հաջողության վստահությամբ են մեկնարկում*** նաև այնտեսակ արվեստներում, որոնք ստեղծում են տևականորեն մնայուն իրեր՝ տուն, սեղան, աթոռ, անոթ…, կամ որոնք հենց Աստծո բարերարության գործիքներ են մեզ համար՝ բժշկագիտությունը, հողագործությունը, կառավարման գիտությունը…, կամ որոնք սահմանափակվում են լոկ գործողությունների կատարումով՝ պարարվեստը, ռազմարվեստների զինասպարեզը, ըմբշամարտը, որ և մեծաչափ կիրառություն ունեն մարդկային կյանքում: Եվ սուրբ հոր տեսակետում այդտեսակ արվեստները, թեև ոչ սկզբունքորեն ամենքի համար համընդհանրական անհրաժեշտությամբ, այնուհանդերձ, անօգտակար չեն նաև

[1] Տե՛ս նույն տեղը, էջ 132-133:

[2] Նույն տեղում, էջ 135:

յուրաքանչյուր քրիստոնյայի՝ ըստ բարենշանակ պիտոյության որևիցե իրենց կարիքի, և, անշուշտ, կարող են հնարավորություն ընձեռել՝ մտորել ու կշռադատել Սուրբ Գրքի խորհրդապատումներում նույն այդ արվեստներից փոխառյալ այլաբանող տեղիների առնչությամբ[1]:

Օգոստինոսը «մարմնին ու զգայություններին» վերաբերող գիտությունների իր քննա-խորհրդածություններից վերընթանում է նաև ***«հոգուն ու բանականությանը»*** և բուն ***մտքին ու հենց մտակապակցմանը*** վերաբերող գիտություններին, որոնցից մեկնագիտական իր երկի «խնդրո բանի» առնչությամբ, որպես առավել ուշագրավ, քննախոհության ենթակա է դիտարկում տրամաբանությունը («դատողության գիտությունը») ու մաթեմատիկան («հանրահաշվի գիտությունը», նույնն է թե՝ «համարողության արվեստը»)[2]: Եվ այս գիտությունները նույնպես մարդաստեղծ մտահորինվածք ու զուտ «մարդկային արարումներ չեն, այլ միայն ուսումնասիրված ու (փորձով[3]) բացահայտված են նրանց կողմից»[4] և երկուստեք իսկապես «իրենք իրենցում՝ ի վերուստ նախասահմանյալ բնության հավերժ օրենք՝ մարդկանցով իմացահայտ են՝ նկատված դրանցով ուսանելու և ուսուցանելու համար»[5]: Տրամաբանության գիտությունը «մեծաչափ նպաստում է Սուրբ Գրոց դժվարին տեղիների հասկացմանը, և, սակայն, անհարկի է այն կիրառել լոկ վիճելու և հակառակորդին իր սխալի մեջ «բռնացնելու» մանկական սնափառ ցանկությամբ», – գրում է ս. Օգոստինոսը[6]: Ընդ որում, «այլ բան է՝ գիտենալ մտակապակցման կանոնները, և այլ բան է՝ գիտենալ մտքերի բուն իսկությունը»[7]: Եվ երբ ոմանք մտակապակցման կանոններին ուսյալ սնափառությամբ պարծենում են այնչափ՝ կարծես թե գիտեն արդեն մտքերի բուն իսկությունը, և երբ ոմանք գիտենալով լոկ մտքերի բուն իսկությունը՝ իրենցում խեղճանում ու գանգատվում են, որ չգիտեն մտքերի ճշմարիտ կապակցման կանոնները, ըստ Օգոստինոսի, առավել լավ է իմանալ մտքի բուն իսկությունը՝ որ կա մեռյալների հարություն, քան

---

[1] Տե՛ս նույն տեղը, էջ 136-137:
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 137-149:
[3] Նույն տեղում, էջ 144:
[4] Նույն տեղում, էջ 139, 140, 141, 144 և 148:
[5] Նույն տեղում, էջ 139:
[6] Նույն տեղում, էջ 137:
[7] Նույն տեղում, էջ 143:

իմանալ մտքերի ճշմարիտ կապակցման կանոնի համաձայն մտահանգումը, որ և ըստ Պողոս առաքյալի թղթի՝ «եթե չկա մեռյալների հարություն, ապա Քրիստոս հարություն չի առել» (Կորն. Ա, 15, 13)[1]: Արդ՝ առնչվելով և՛ մտակապակցման, և՛ բուն մտքերի բովանդակության՝ ***ճշմարտությանը*** հարաբերակցության խնդրին, առաջինին՝ միմիայն մտահանգմանն անհրաժեշտ մտակապակցման ճշմարտությանն[2] ուսյալ հենց տրամաբանության աշխարհիկ դպրոցներից, երկրորդին՝ մարդկային ինքնության ներկրթությանն՝ առ ի փրկություն և Աստծով երանելի կյանքին առավել նշանակալի ներկայացող՝ ***բուն մտքերի ճշմարտությանն ու հենց իսկությանը*** հարկ է գերազանցապես ուսումնառու և բանահասու լինել Սուրբ Գրքից[3]:

Հաշվողական գիտություններում՝ մաթեմատիկայում ու հենց թվաբանությունում ուսումնասիրվող թվերի օրենքները՝ դիտարկվելով թվերն ինքնին, թե՝ որևոր ֆիգուրների, հնչյունների կամ այլ շարժումների օրենքների առնչությամբ, միշտ անփոփոխ են և նույնպես ամենևին հաստատյալ չեն մարդկանցով, այլ միայն բացահայտված նրանցից խորաթափանցագույնների կողմից[4]: Միաբերելով վերոնշյալ գիտությունների՝ ամենևին ոչ զուտ մարդ-կային արարյալ լինելը հայտորոշող իր քննա-խորհրդածությունները՝ Օգոստինոսը հաստատագրում է, որ պատմությունում՝ ըստ ժամանակընթաց կարգավորության պատմելով տարատեսակ իրադարձություններ՝ ոչինչ այդ կարգավորությունում չի հորինում ինքը՝ մարդը, ինչպես նաև երկրների տեղագրության, կենդանիների, բույսերի, քարերի հատկությունների, աստղերի ու իրենց շարժման նկարագրություններում ոչինչ չի մտահղացվում կամ հորինվում մարդկանցով և նույնիսկ ըստ մտակապակցման կանոնների՝ ստույգ մտահանգմամբ ասելով ճշմարտություն, մարդուց չի կախված այդ ճշմարտությունը, այլ միայն նրանով ցույց է տրված, որ ճշմարտություն է այն[5]:

Շարունակելով ***հոգուն ու բանականությանը*** և հենց ***մտքին ու մտակապակցմանը*** վերաբերող գիտությունների ու արվեստների իր

---

[1] Տե՛ս նույն տեղը, էջ 143-144:
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 143:
[3] Տե՛ս նույն տեղը, էջ 139:
[4] Տե՛ս նույն տեղը, էջ 149:
[5] Տե՛ս նույն տեղը, 139-140:

քննա-խորհրդածությունները՝ Օգոստինոսն հաստատագրում է, որ նույն կոչումն ունի նաև ***Ճարտասանությունը***[1]***,*** որ և հարկ է ընկալել առավելապես որպես ***խոսքարվեստի շնորհ, այլ ոչ մտածողության կարողություն,*** ըստ էության, իր կանոնների ուսուցանությամբ ներկրթելով ***խելացկունության,*** որ և ամենևին անհարկի է ինքնահասկանալ ու նույնորոշել իբրև թե Աստծով երանելի կյանքի բուն գաղտնիքի խորհրդիմաց բանահասություն[2]: Ըստ նրա, ճարտասանության կանոններով մարդիկ ուսումնառու են կշռադատության և քննադիտարկելու իրերը տարբեր կողմերով ու հարաբերություններով, ասել է թե՝ իրենց տարահատկություններով ու տարակապակցություններով, որ թեև ինքնին ճշմարիտ լինելով՝ կարող են կիրառվել ոչ լոկ ճշմարտության, այլ երկուստեք՝ թե որևիցե ճշմարտության և թե որևիցե ստության այլոց համոզելու համար, և ուրեմն՝ նվազաչափ անգամ դատափետելի ու պարսավելի չեն, այլ նշավակելի է միայն իրենց ի չար գործածությունը[3]: Եվ սուրբ հայրը որպես ակնառու հաստատում իր հիմնորոշ այն մտքի, թե ***ճարտասանության արվեստն ու իր կանոնների ամբողջությունը ևս մարդկանցով ստեղծվածքներ չեն, այլ ի վերուստ հաստատյալ՝ լոկ ուսումնասիրված ու բացահայտված են նրանց կողմից***[4]***,*** մեջբերում է որոշ կանոնների օրինակներ՝ սիրո նկարագրությամբ ընթերցողի գերվելը, կարճ ու հստակ խոսքով ընթերցողի առավել խրատընկալու լինելը, որի տարակերպությամբ՝ առանց հավելապաճույճ զարդարման ու ծանրաբեռնման, ունկնդրի կամ ընթերցողի ակամա ուշադրությունն ապահովելը: Անշուշտ, խոսքարվեստի շնորհն իրենում և-կամ իրենով կատարելագործյալ ճարտասանության կանոնների ուսումնառությամբ՝ կարող է և օգտակար ու պիտանի լինել որպես հենց Աստծո Խոսքի քարոզխոսություն և, սակայն, ի տարբերություն ոմանց կարծիքի, ըստ Օգոստինոսի, ինքնին կանոնների իմացությունը ոչ այնքան է կարևոր յուրաքանչյուրին, քանզի մարդիկ երբեմն հասկանում են բուն իրերն առավել անմիջականորեն, քան մանվածապատ այն կանոնները, որ և

[1] Տե՛ս նույն տեղը, էջ 145:
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 146:
[3] Տե՛ս նույն տեղը, էջ 145:
[4] Տե՛ս նույն տեղը, էջ 146:

նպատակաուղղված են նույն այդ իրերի հասկացմանը[1]: ***Ճարտասանության կանոնները ոչ թե բազմաչափ նպաստում են բուն իսկության բացահայտմանը, այլ առավելապես հաճույք պատճառում՝ նպաստելով իսկության տարակերպ ու պատկերավոր ընկալմանը[2]:*** Եվ անշուշտ, այդ կանոնների իմացությունը կարող է նաև իր օգտավետությունը հաստատել՝ ***մարդկային խելահասությանն ընձեռելով փորձառություն ու շրջաճկունություն***, անշուշտ, եթե միայն ճարտասանությանն ուսյալ ոմանք չեն այլակերպում այն չարանշանակ խորամանկության ու գոռոզամտության, չեն խաբում այլոց՝ դառնալով հմտունակ ու վարժունակ սուտը ներկայացնելու իբրև ճշմարտություն, և սնափառությամբ ներքուստ նաև պարծենում հեզ ու հանդարտ մարդկանց դիմաց՝ իբրև թե իրենք գիտեն ու վերահասու են կարևոր ինչ-որ մի բանի[3]: Ամփոփելով մարմնին ու զգայություններին կամ հոգուն ու բանականությանը վերաբերող վերոնշյալ գիտությունների ու արվեստների որպիսության՝ քրիստոնյա անձանց ինքնության ու կյանքի կարիքներին, ինչպես նաև Սուրբ Գրքի իմաստապատումների ու խորհրդապատումների ուղղաբանող ու այլաբանող իմաստների բանահասությամբ՝ առ տեսա-գործնական իմաստություն ներկրթությանն ու ներկատարելագործմանն անհրաժեշտ օգտության ու պիտանիության իր քննա-խորհրդածությունները՝ ս. Օգոստինոսն ամենայն դրանց առնչությամբ վերահաստատում է հին հույն յոթ իմաստուններից Սոլոնին[4] վերագրվող հայտնի ասացվածքը՝ ***«Ոչի՛նչ չափից ավել»[5]:***

ԱՄՓՈՓՈՒՄ

Ս. Օգոստինոսի «Սրբազան Հերմենևտիկային» («Սրբազան Մեկնագիտությանը») փոխներթափանց միահյուս «էկզեգետիկայի» («գիտամեկնության») փոխզորակցությամբ ներկայացող տեսա-գործնականորեն ամբողջական մեկնահայեցակարգը կոչված է

---

[1] Տե՛ս նույն տեղը, էջ 146-147:

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 147-148:

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 148:

[4] Տե՛ս **Диоген Лаэртский**, О жизни, учениях и изречениях знаменитых философов, “Мысль”, М., 1979.էջ 82, h. 63:

[5] Տե՛ս **Августин Блаженный**, Христіанская наука, или Основанія св. Герменевтики и церковнаго краснорѣчія, Кіев, 1835, էջ 151:

հավատի ու մտքի փոխներգործուն փոխզորակցությամբ բանահասու լինել (հասկանալ) ***Սուրբ Գրերում բովանդակյալ իմաստությանը:*** Նրա մեկնագիտությունը դիտավորությունն ու կատարումն է՝ կայանալ որպես «Սուրբ Գրոց»-ում բովանդակյալ ***իմաստության բանահասության ու մեկնորոշման ընդհանուր տեսություն***, ինչը և, ըստ իս, հնարավորություն է ընձեռում այն դիտարկել որպես «իմաստության հերմենևտիկայի» սկզբնավորում: Իր «Քրիստոնեական գիտությունը» մեկնագիտական աշխատությունում նա քննորոշում է նաև իր ժամանակաշրջանում հայտնի գիտությունների, արվեստների ու այլազան իմացակարգերի պիտանի և-կամ անպետ լինելը Սուրբ Գրոց իմաստությանն ընթերցասեր և ուսումնասեր բանահասությանը: Օգոստինոսը ***երկսեռ տարորոշում*** է ***գիտությունները***՝ երկուստեք սերտ կապված մարդկային ինքնությունը, կյանքն ու մշակույթը ճշմարտաբան ու արդարաբան հոգևոր որպիսությամբ կայացնող ***բարոյականությանը: Առաջին սեռի*** ներքո նա հիշատակում է այն գիտությունները, որ և որպես առարկա ու բովանդակություն ունեն ***մարդկանցով ստեղծվածն ու սահմանադրվածը,*** դրանց թվում նշելով ու արժևորելով և՛ այնպիսիք, որ կենսօգուտ են մարդկային համակեցությանը, և՛ նշավակելով ու խոտանելով այլպիսիք, որ էապես կապված ու կապանքված և նույնիսկ հատկորոշված են սնոտիապաշտություններով: ***Երկրորդ սեռի*** ներքո նա առանձնացնում է այն գիտությունները, որ ուսումնասիրում են այն, ինչը չի ստեղծված նրանց կողմից, այլ դիտարկումներով ընդունված է որպես ***աստվածատուր ու պատրաստի*** կամ ***ի վերուստ հաստատված:***

Բանալի բառեր. «Սրբազան Հերմենևտիկա», «Սուրբ Գիրք», իմաստություն, բանահասություն, հասկացում, մեկնորոշում, գիտություն, օգտակար, պիտանի:

ДВУРОДОВОЕ РАЗЛИЧЕНИЕ НАУК ПОЛЕЗНЫХ И ПОТРЕБНЫХ РАЗУМЕНИЮ СВЯЩЕНОГО ПИСАНИЯ В КОНЦЕПЦИИ «СВЯЩЕННОЙ ГЕРМЕНЕВТИКИ» СВ. АВГУСТИНА

Ромик Кочарян
Кандидат философских наук, доцент
старший научный сотрудник,
«Матенадаран» имени Маштоца

РЕЗЮМЕ

Теоретико-прикладная цельная концепция интерпретации св. Августина предстающаяся в двуединстве его «Священной герменевтики» и с нею же взаимодейственно сплетенной «экзегетики», призвана разумению (пониманию) и интерпретации премудрости Священного Писания посредством интерактивного взаимодействия мысли и веры. Намерение и свершение его концепции герменевтики – становление в качестве общей теории разумения и истолкования премудрости Священного Писания - на мой взгляд, позволяет рассматривать её как начало «герменевтики мудрости». «Священной Герменевтике» научающем своем трактате «Христианская наука» он исследует пригодность или бесполезность наук, искусств, различных познавательных дисциплин и практик к чтению и разумению библейской премудрости. Августин проводит различие между двух родов наук и оправдывает те, которые сущностно, основоположно и неразрывно связаны с христианской моралью, в духе истины и справедливости формирующей человеческую идентичность, жизнь и культуру. Под первым родом он упоминает науки, которые имеют в качестве предмета и содержания то, что создано и конституировано людьми, означивая и восхваляя среди них те, которые являются жизненно-полезными и потребные человеческому сосуществованию и общежитию, а также осрамляя и оправергая те, которые по существу привязаны, увязаны и окованы, учреждёны и пронизаны суеверием. Под вторым родом он выделяет науки, изучающие то, что не создано людьми, но принимается наблюдением как богоданное и готовое или установленное свыше Господом.

Ключевые слова: «Священная Герменевтика», «Святое Писание», мудрость, разумение, понимание, истолкование, наука, полезное, потребное.

THE TWO-KIND DIFFERENTIATION OF SCIENCES USEFUL AND REQUIRED TO THE UNDERSTANDING OF HOLY SCRIPTURE IN THE CONCEPTION OF «SACRED HERMENEUTICS» OF ST. AUGUSTINE

Romik Kocharyan
PhD, Senior Researcher,
«Matenadaran» after M. Mashtots

SUMMARY

The theoretical and applied integral concept of the interpretation of St. Augustine, appearing in the dual unity of his «Sacred hermeneutics» and with it intertwined «exegesis», is called upon to comprehend (understand) and interpret the wisdom of Holy Scripture through the interactive interaction of thought and faith. The intention and fulfillment of his concept of hermeneutics - becoming a general theory of understanding and interpretation of the wisdom of Holy Scripture - in my opinion, allows us to consider it as the beginning of the «hermeneutics of wisdom». In his treatise «Christian Science» teaching to «Sacred Hermeneutics», he examines the suitability or uselessness of sciences, arts, various cognitive disciplines and practices for reading and understanding biblical wisdom. Augustine distinguishes between two kinds of sciences and justified those that are essentially, fundamentally and inextricably linked with Christian morality, which formates human identity, life and culture in the spirit of truth and justice. Under the first genus, he mentions sciences that have as their subject matter and content what is created and constituted by people, signifying and praising among them those that are vital useful and required to human coexistence and community, as well as shaming and refuting those that are essentially attached, bound, instituted and penetrated with superstition. Under the second kind, he distinguishes sciences that study what is not created by people, but is accepted by observation as God-given and ready or established from above by Lord.

Keywords: «SACRED HERMENEUTICS» («Hermeneutica sacra»), «Holy Book», wisdom, comprehending, understanding, interpretation, science, useful, required.